ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ ՇՎՏՄ) ղեկավար Արմեն Կոտոյյանը, ղեկավարի տեղակալ Արթուր Մկրտչյանը և որակի ապահովման վարչության պետ Արարատ Սարգսյանը սույն թվականի հոկտեմբերի 16-19-ը ուսումնական այցով գտնվել են Էստոնիայի Հանրապետության մայրաքաղաք Տալլին քաղաքում: Միջոցառումը կազմակերպվել էր ԵՄ TAIEX ծրագրի շրջանակում՝ (TAIEX Case ID INT MARKT IND/STUD 83135) ՇՎՏՄ-ի աշխատակիցների կողմից ոչ պարենային արտադրանքների շուկայի վերահսկողության ոլորտում ԵՄ լավագույն փորձի ուսումնասիրության նպատակով:

Այցի ընթացքում ՇՎՏՄ-ի աշխատակիցներն այցելել են Էստոնիայի Հանրապետության ոչ պարենային արտադրանքների շուկայի վերահսկողության ոլորտում գործունեություն ծավալող 3 կազմակերպություն.

- Սպառողների պաշտպանության և տեխնիկական կարգավորող մարմին
- Էստոնիայի առողջապահության խորհուրդ
- Էստոնիայի հարկային և մաքսային խորհուրդ:

Սպառողների պաշտպանության և տեխնիկական կարգավորող մարմին (այսուհետ՝ ՍՊՏԿՄ) այցելության ժամանակ տեղի է ունեցել հանդիպում մարմնի ղեկավար Կրիստինա Կալվեի և ՍՊՏԿՄ-ի այլ աշխատակիցների հետ:

Ընդհանուր առմամբ ՍՊՏԿՄ-ն ունի 81 գործառույթ հետևյալ բնագավառներում.

- Գործունեության և օգտագործման թույլտվությունների տրամադրում
- Պետական վերահսկողություն
- Շուկայի կարգավորում
- Խորհրդատվություն
- Սպառողական վեճերի լուծում:

ՍՊՏԿՄ-ն ունի 155 աշխատակից: Իր գործունեությունը մարմինն իրականացնում է գործունեության տարեկան ծրագրի, ինչպես նաև ԵՄ հանձնաժողովի կողմից ոլորտային ստուգումների հիման վրա: Գործունեության տարեկան ծրագրի հիմքում ոլորտային ռիսկայնության հաշվարկն է: Տնտեսվարողները չեն դասակարգվում ռիսկայնության սանդղակով: Հաստատված ծրագիրը ներկայացվում է անմիջական ստուգում իրականացնող տեսուչներին, որոնք իրենց հատկացված տարածքներում իրականացնում են համապատասխան ստուգումներ: Հիմնականում ստուգումը իրականցնում է մեկ տեսուչ: Անհրաժեշտ է նշել, որ տեսուչները օժտված են ստուգման օբյեկտների ընտրության և ստուգումների քանակի որոշման իրավունքով և

պարտադրված չեն ստուգումները համաձայնեցնել ղեկավարության հետ: Ստուգման արդյունքները տեղադրվում են մարմնի կողմից ստեղծված հատուկ ցանցում: Ստուգման գործընթացն առավելագույնս պարզեցված է, և տեսուչները պարտադրված չեն կազմել բազմաթիվ փաստաթղթեր: Խախտում արձանագրելու դեպքում տնտեսվարողին հայտարարվում է նախազգուշացում, արտադրանքի վաճառքը արգելվում է և տրվում է կարգադրագիր՝ խախտումները վերացնելու նպատակով: Կարգադրագիրը չկատարելու դեպքում տնտեսվարողին նշանակվում է տուգանք մինչև 50 000 եվրո և տրվում է նոր կարգադրագիր: Հարկ է նշել, որ ստուգումների մեծ մասը փաստաթղթային են: Լաբորատոր ստուգումները իրականացվում են հազվադեպ, ինչը պայմանավորված է այդ նպատակների համար հատկացված ֆինանսական միջոցների սակավությամբ. տարեկան ընդհամենը 6 000 եվրո: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ որոշ նախալաբորատոր և լաբորատոր ստուգումներ մարմինը իրականացնում է իր տնօրինության տակ գտնվող լաբորատորիայում, որը հավատարմագրված չէ, սակայն ախտորոշման արդյունքները ներկայացվում են տնտեսվարողին: Եթե տնտեսվարողը համաձայն չէ մարմնի կողմից իրականացված լաբորատոր ստուգման արդյունքների հետ, ապա նա իր հաշվին իրականացնում է նմանատիպ լաբորատոր ստուգում երրորդ կողմի լաբորատորիայում, և արդյունքների՝ իր օգտին չհամընկնելու դեպքում պետությունը հատուցում է տնտեսվարողի կողմից ծախսված գումարը: Այսպիսի գործընթաց իրականացվում է ԵՄ շատ երկրներում:

ՇՎՏՄ-ի աշխատակիցներին ներկայացվել է նաև ՍՊՏԿՄ-ի կողմից իրականացվող սպառողական վեճերի լուծման փորձը: Այս նպատակով մարմնում գործում է Սպառողների վեճերի հանձնաժողով, որը հետազոտում և որոշում է կայացնում սպառողների և տնտեսվարողների միջև ի հայտ եկած վեճերի առնչությամբ: Որոշումները լինում են սպառողի պահանջի բավարարման, մասնակի բավարարման կամ չբավարարման վերաբերյալ: Սպառողական վեճի վերաբերյալ որոշումը կայացվում է 90 օրվա ընթացքում: Այս գործընթացն իրականացվում է տնտեսվարողի կողմից պայմանագրի կետերի խախտման, ինչպես նաև արտադրանքը փոխանակելուց, վերադարձնելուց կամ գումարը վերադարձնելուց հրաժարվելու դեպքում: Չեն ընդունվում այն բողոքները, որոնք կապված են փորձաքննության հետ և նրանք, որտեղ ապրանքի գինը չի գերազանցում 30 եվրոն: Այդ դեպքերում սպառողին առաջարկում են դիմել դատարան: Բողոքները ներկայացվում են գրավոր տեսքով քարտուղարություն, որտեղ աշխատում է 10 իրավաբան, մեկ ամսվա ընթացքում փաստաբանը միջինը 30 բողոք է լուծում: Սպառողների վեճերի հանձնաժողովը տարեկան կտրվածքով ստանում է մոտ 4 000 բողոք: Այդ բողոքների 50%-ը լուծվում է առանց որոշում կայացնելու՝ տնտեսվարողի

կողմից իր մեղքը ընդունելու պատճառով: Մնացած դեպքերում իրականացվում է հետազոտում և ընդունվում է որոշում: Սակայն ընդունված որոշումների 35%-ը տնտեսավարողների կողմից չի կատարվում: Հանձնաժողովը չի կարող պարտադրել իր որոշումների կատարումը: Ներկայումս մշակվում է կարգ՝ հանձնաժողովի որոշումների պարտադրանքի նպատակով: Անորակ արտադրանքի վերաբերյալ բողոքները անցնում են այլ գործընթաց, այդ բողոքների հիման վրա ստուգումներ են իրականացվում:

ՍՊՏԿՄ-ն իրականացնում է էլեկտրոնային հեռահաղորդակցության վերահսկողություն, որի շրջանակում ստուգվում է նաև ինտերնետային և բջջային կապի որակը: Այդ նպատակով մարմինը ունի առանձին ստորաբաժանում, որը հագեցված է համապատասխան սարքավորումներով:

ՍՊՏԿՄ-ը, ինչպես բոլոր ԵՄ երկրները, առանձնահատուկ ուշադրություն է հատկացնում տնտեսվարողների կողմից սպառողական ապրանքների զեղչված վաճառքի կարգի հսկողությանը: Այս նպատակով մարմինը օգտագործում է բարձր տեխնոլոգիաներ, մասնավորապես՝ Դանիայում և Գերմանիայում մշակված հատուկ ծրագրերը, որոնք թույլ են տալիս հետևել արտադրանքների գների տատանումներին:

Պետք է նշել, որ ՍՊՏԿՄ-ը հաշվետու չէ որևէ կառույցի: Իր գործունեության արդյունքները մարմինը ներկայացնում է էկոնոմիկայի նախարարությանը՝ վերջինիս կողմից այդ արդյունքները ԵՄ հանձնաժողով ներկայացնելու համար:

Ներկայացվել է նաև ՍՊՏԿՄ-ի գործունեությունը, որն իրականացվում է ԵՄ այլ երկրների հետ համատեղ կամ միայն ԵՄ տարածքում: Մասնավորապես՝

- Եվրոպական սպառողական կենտրոնների ցանց: Այս կառույցը թույլ է տալիս սպառողներին ներկայացնել իր բողոքները բոլոր ԵՄ երկրներում:
- Safety Gate: Արդյունավետ գործիք, որը թույլ է տալիս ցանկացած երկրի շուկայի վերահսկողության մարմնի կողմից հայտնաբերված վտանգավոր արտադրանքները արագ կերպով ողջ եվրոպական շուկայից հանել:

Ներկայացվել է ՍՊՏԿՄ-ի և Մաքսային մարմնի համագործակցությունը շուկայի վերահսկողության բնագավառում: ՍՊՏԿՄ-ը սահմանին ստուգումներ չի իրականացնում, սակայն Մաքսային մարմնի աշխատակիցները տեղեկացնում են ՍՊՏԿՄ-ին երկիր ներմուծվող կասկածելի ապրանքների վերաբերյալ, և ՍՊՏԿՄ-ն ունի 3 աշխատանքային օր իր դիրքորոշումը ներկայացնելու համար: Անհրաժեշտության դեպքում հնարավոր է իրականացնել նաև լաբորատոր ստուգում: Մաքսային մարմնի աշխատակիցները պարբերաբար ՍՊՏԿՄ-ում անցնում են դասընթացներ կասկածելի ապրանքների հայտնաբերման ուղղությամբ:

Առանձին հանդիպումներ են կազմակերպվել խաղալիքների, ցածրավոլտ սարքավորումների, էլեկտրոնային հեռահաղորդակցության, ծառայությունների, ծխախոտային արտադրանքի և անձնական պաշտպանիչ սարքավորումների, էլեկտրոնային առևտրի ոլորտներում գործունեություն իրականացնող մասնագետների հետ: Ներկայացվել է ԵՄ երկրների աշխատանքը վտանգավոր արտադրանքների հետ:

ՇՎՏՄ-ի աշխատակիցներին ներկայացվել են նաև ՍՊՏԿՄ-ի կողմից իրականացվող աշխատանքները՝ իրազեկման և հանրության հետ հաղորդակցության ոլորտում: Այդ նպատակները իրակնացնելու համար մարմնին ամեն տարի հատկացվում է 85 000 եվրո: Իրազեկման աշխատանքները մարմինն իրականացնում է ինչպես տնտեսվարողների և տնտեսավարողներին ներկայացնող կազմակերպությունների այնպես էլ սպառողների շրջանում: Մասնավորապես՝ սպառողների համար կազմակերպվում են հեռուստածրագրեր, նկարահանվում են տեսահոլովակներ, թողարկվում է շաբաթաթերթ, տարածվում են թռուցիկներ: Տնտեսվարողները հրավիրվում են իրազեկման հանդիպումների, ինչպես նաև նրանց համար կազմակերպվում են դասընթացներ:

Էստոնիայի առողջապահության խորհրդում (այսուհետ՝ ԷԱԽ) տեղի է ունեցել հանդիպում Խորհրդի պետի տեղակալի Մարիա-Աննա Հարմայի և վերահսկողություն իրականացնող դեպարտամենտի ղեկավարի հետ:

ՇՎՏՄ-ի աշխատակիցներին ներկայացվել են ԷԱԽ-ի կողմից իրականացվող աշխատանքները՝ ներառյալ շուկայի վերահսկողության բնագավառը: ԷԱԽ-ն իրականացնում է կոսմետիկ արտադրանքի և քիմիական նյութերի վերահսկողություն: Վերահսկողության պլանավորումն ու իրականացումը գրեթե չի տարբերվում ՍՊՏԿՄ-ից:

ԷԱԽ-ն հագեցված է կենսաբանական, քիմիական և ֆիզիկական լաբորատորիաներով: ՇՎՏՄ-ի աշխատակիցները այցելեցին լաբորատորիաներ:

Էստոնիայի հարկային և մաքսային խորհրդում (այսուհետ՝ ԷՀՄԽ) տեղի էր ունեցել հանդիպում մարմնի ղեկավարի տեղակալ Ուրսուլա Ռիմաայի և այլ աշխատակիցների հետ:

Հանդիպման ընթացքում ՇՎՏՄ-ի աշխատակիցներին ներկայացվել են ԷՀՄԽ-ի գործառույթները, ներառյալ՝ շուկայի վերահսկողությունը: ԷՀՄԽ-ն ինքնուրույն իրականացնում է երկիր ներմուծվող վառելիքի սահմանային վերահսկողությունը և ՍՊՏԿՄ-ի և ԷԱԽ-ի հետ համատեղ ոչ պարենային արտադրանքների սահմանային վերահսկողությունը, ինչպես նաև կեղծ արտադրանքների հայտնաբերումը: 2022

թվականի ընթացքում իրականացվել է 1200 արտադրանքների սահմանային ստուգում, որի արդյունքում հայտնաբերվել է 811 խախտում:

ՇՎՏՄ-ի աշխատակիցներն այցելել են նավթամթերքի լաբորատորիա:

Էստոնիայի շուկայի վերահսկողություն իրականացնող մարմինների կողմից օգտագործվող որոշ գործիքակազմեր ուշադրության են արժանի և հնարավորության դեպքում կարող են ավելացվել ՇՎՏՄ-ի գործիքակազմում:
Մասնավորապես՝

1. Մաքսային մարմինների հետ համատեղ ստուգումները,
2. Սպառողների վեճերի հանձնաժողովը:

Ուշադրության է արժանի նաև ՍՊՏԿՄ-ի կողմից չհավատարմագրված լաբորատորիայի օգտագործումը ստուգումների ընթացքում վերցված փորձանմուշների ախտորոշման համար: Նշված մոտեցումը հնարավորության դեպքում կարելի է դիտարկել ՇՎՏՄ-ում ներդնելու համար:

Շուկայի վերահսկողության տեսչական

10/25/2023

X

ԱՐՄԵՆ ԿՈՏՈԼՅԱՆ

Signed by: KOTOLYAN ARMEN 3810870129

մարմնի ղեկավար՝
Արմեն Կոտոլյան

25.10.2023թ.